ԱԶԳԱՅԻՆ

ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ԿՏԱԿ

Բազմաց քաջայայտ է Երկայնաբազուկ — Արղութեանց հանգուցեալ Դաւհրաժան Իշխանին կտակը, որով Աղէքսանդրապօլ քաղաքին մէջ Հայոց օրիորդաց համար դպրոց հիմնուած է և կշարունակուի նորին անուամբ և կտակեալ գումարին տոկոսօք, որոց համար ի ժամանակին՝ ամսագրոյս մէջ կարևոր տեղեկութիւնք հրատարակուած են:

Այնպէս բազմաց վաղածանօթ պիտի լինի սոյն կտակի դէմ Արժանայիշատակ Արղութեանց Դաւհրաման իշխանի ազգականներէն ոմանց յարուցած դատը, զոր երբեմն յաջողեցան և կարծեցին վաստակած լինել, սակայն Հայոց Հոգևոր Իշխանութիւն այս խնդրոյս մէջ ունեցած իրաւասութեամբ իբրև [illegible] բողոք կոչաւ առ Ծերակոյտն Ս. Պ. բուրգոյ, որ Տփխեաց Դատաստանական Պալատան վճռոյն հակառակ հաստատելով կտակին վաւերականութիւնը՝ առաջարկած էր Տփխեաց Դատ. Պալատան ըստ այնմ կրկին նկատողութեան առնուլ և վճռել, ուր հակառակորդաց բացառութիւն լինելով՝ Հոգևոր Իշխանութեան իրաւունք հաստատուած լինելը աւետեցաւ մեզ ի Տփխիսոյ, զոր բերկրապատար սրտիւ հաղորդելով մեր համայն սիրելի Ազգայնոց՝ նաև կշնորհաւորեմք մեր Աղէքսանդրապօլսեցի եղբայրները՝ իւրեանց ի վտանգի եղած Արղութեանց օրիորդաց դպրոցի ազատութեան համար . . . :

Առ այժմ արժան կհամարիմք այս խնդրոյ առթիւ Տփխիսայ Մեղու լրագրոյ 40րդ թուոյն մէջ հրատարակած հետևեալ կարևոր տեղեկութիւնը և դիտողութիւնը աստ յաւելուլ՝ յուսալով որ՝ կրկին առիթ պիտի ունենամք այս խնդրոյ վերայ աւելի ընդարձակ գրելոյ:

« Մեր ընթերցողներին յայտնի է արդէն հեռագրալուրից Ծերակոյտի վճիռը իշխան Դաւհրաման Արղութեանի կտակի մասին մեր Հոգևոր կառավարութեան բողոքի պատճառաւ Տփխիսի Դատաստանական պալատի վճռի դէմ: Ծերակոյտը վճռաբեկեց վերջինը և առաջարկեց միևնոյն պալատին վերաքննել միևնոյն գործը վերաբերութեամբ Հայոց Հոգևոր կառավարութեան մասնակցութեան և իրաւանցը: Կառավարչական ծերակոյտը մատնացոյց եղաւ պալատին նորա առաջայ վճռի նախագծի վերայ, պարզելով թէ Իշխան Արղութեանի ժառանգները կտակի 11-դ յօդուածի մասին իւրեանց պահանջով պիտի դիմեին ոչ թէ դէպի կտակակատարներն, այլ դէպի Հայոց Հոգևոր իշխանութիւնը, որին կը պատկանի սեպհականութեան իրաւունքը 11-դ յօդուածի մէջ կտակած գումարի վերայ: Այդ պատճառաւ Տփխիսի Դատաստանական պալատն իւր երկրորդ քննադատութեան մէջ համաձայն ծերակոյտի հրամանին՝ վճռեց Իշխան Արղութեանի ժառանգների վէճը 11-դ յօդուածի առթիւ կտակակատարների դէմ թողնել առանց քննութեան:

Այստեղից հետևում է, որ մեր Հոգևոր կառավարութիւնը պիտի պատրաստ լինի սպասել ժառանգների կողմից վէճ միևնոյն հարցի մասին: Հոգևոր կառավարութիւնը պէտք է ի նկատի ունենայ, որ սպասելի վէճի պարունակութիւնը նորա կողմից երկու կէտից պիտի կազմակերպուի, այն մտօք ինչպէս այդ գործը պարզուեցաւ ծերակոյտում եղած վիճաբանութիւններից, և նորա վճռի գաղափարովը այսինքն Կոնսիստորիան կարող է հաստատել ուսումնարանի գոյութիւնը մինչև անգամ 11 դ յօդուածի նպատակի հիման վերայ, միւս կողմից նա պիտի ապացուցանէ, որ

օրէնքով եթէ ուսումնարանի գոյութիւնը կախուած լինի, դարձեալ գումարն է սեպհականութիւն հոգևորականութեան, միայն այն պայմանով, որ Հոգևոր կառավարութիւնն այդ գումարը ծախսելիս այլ նպատակների համար պարտ է իւրաքանչիւր դիպուածքում խնդրել թոյլտուութիւն ներքին գործոց նախարարի կողմից։ Ցանկանում ենք մեր հոգևոր կառավարութեանը յաջողութիւն այդ գործում։

ՆՊԱՍՏ.

Ինչպէս Արմատգրոյս օգոստոսի թերթին մէջ հրատարակեցինք Գալրիժոյ Հայոց դպրոցին նպաստողաց անուանքը, այս անգամ կյաւելումք հրատարակել հետևեալներուն անուանքը ևս։

	Թում.	Ղրան*)
Ալլէկ Կրէյնֆիլդ	100	
Դանիէլ Մ. Շահրազևանց . . .	100	
Սողոմոն Բէժոյեան	50	
Թովմաս Ճելալեան	20	
Սողոմոն խան Սաղինեանց . . .	20	
Ասլան Խաւար Լենակոլովեանց . .	20	
Կարապետ Մանուէլեան . . .	15	
Դաւիթ Սարգսեան	14	
Եսայի Մանուկի Աստուածատուրեան	12	
Մկրտիչ Ջոհրարեան	10	
Ստեփան Կ. Նէրսեսեանց . . .	10	
Յակոբ Բ. Թամիրեանց . . .	7	
Խաչատուր Ցէթաղեան	7	
Արզուման Հայրապետեան . . .	6	
Անտոն Փօրէսի, Ցոյն	5	
Աւետիս Յովհաննէսեան. . . .	5	
Մկրտում Առաքելեան	4	
Սարգիս Մկրտչեան	5	
Պետրոս Համբարձումեան . . .	5	
Յօնան Յակոբեան	2	
Ծատուր Էյվազեան	2	
Ծատուր Մնացականեան . . .	2	
Սարգիս Հայրապետեան . . .	2	
Բաղդասար Մանուկի Դաւթեան .	2	
Մինաս Գրիգորեան	1	
Դաւիթ Ալբէսեան	2	5
Սարգիս Գրիգորեան.	—	7
Գումարն է	425	2

(*) Մի ղռանն արժէ 28 1/2 կոպէկ արծաթ Ռուսիոյ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԵԱՑ ԳԻՐ.

Յանցելումն՝ Վեհ. Խայրապետ՝ Հայկ. 12 ամսեան տաւէն հանդերձ նորոգն և այլ պարագայիւք՝ ութն փութի չափ տառ ընծայած էր ի ձեռն հոգեզգօն Մամբրէ Եպիսկոպոսի Մամիկոնեանց, և յիշեալ Եպիսկոպոսն զայն ի Մուշ Գլակայ հռչակաւոր վանուց յանձնած լինելով, այս անգամ յիշեալ վանուց Միաբանութիւն յատկապէս առ Վեհ. Խայրապետ հետևեալ շնորհակալեաց գիրը ուղերձեալ էր, զոր արժան կհամարիմք հրատարակելոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի ժամանակին՝ յորում ճոխանայր յաշխարհի ահեղ պետութիւնն Արշակունեաց արքայութեան, փառք գերագոյն քան զաշխարհի ցոլացաւ ի վերուստ յազգս Հայոց. քանզի Տէրն փառաց խոկ Միածին Որդին Աստուծոյ էջ յերկնից դնել զհիմունս անվախճան թագաւորութեան, բարձրացուցանել յԱրարատեան աշխարհի զզրունս սրբոյ Սիօնի Հայաստանեայց զՀարսն լուսոյ զԿաթուղիկէ Մայրն ամենայն Եկեղեցեաց զՍուրբ Էջմիածինն ասեմք, որում արժանապէս փեսայացեալդ էք յընտրութենէ և ի հրաւիրանաց սուրբ Հոգւոյն։